

ԿՐԿԻՆ ԶՈՒՐ ԵՆ

ՊՂՏՈՐՈՒՄ...

Պարծյալ կրակոցներից ցնցվում են Արցախի լեռները: Պարծյալ հիվանդանոցները վիրավոր հայեր են ընդունում: Պարծյալ զազանաբառ մտքովում են մեր հայրենակիցները:

Իրադրությունը սրվեց անսպասելիորեն, քեև՝ օրինաչափորեն: Հուլիսի 6-ի լույս 7-ի գիշերը Ստեփանակերտի Կրկժան քաղամասում մի խումբ հայեր երկու ժամ շարունակ հերոսաբառ պաշտպանվում էին զինված հարյուրավոր ադրբեջանցիներից: Եվ կարողացան դիմադրել հրացանագարկին: Առանց օգնության, ֆանի որ այնտեղ գտնվող զինվորների մի մասը բախվել էր, իսկ մյուս մասն էլ փակել էր նանապարհը, շրջնելով ստեփանակերտցիներին օգնության հասնել վտանգի մեջ գտնվող իրենց հայրենակիցներին:

Արիության ցուցաբերեցին նաև Քարին տակ գյուղի բնակիչները: Շուշվա բարձունքներից ժայռաբեկորներ էին գործում դեպի գյուղը: Ու նաև այրվող անվաղողեր:

Պատվով դուրս եկավ փորձությունից ժողովրդական միլիցիան:

Այսօր, երբ իրավիճակը, բվում է, նորմալացվում է, օրինաչափ հարց է ծագում՝ ինչու՞ հատկապես հիմա սրվեց իրադրությունը:

Ադրբեջանի ղեկավարությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի այցի նախօրեին, ինչպես ասում են, «վա բանկի» գնաց և նորից ձեռք մեկնեց շանտաժի ֆաղափականությունը, որոշելով մեկ անգամ ևս ցուցադրել այսպես կոչված «ադրբեջանական գործոնը»:

Մինևույն ժամանակ հակահայկական հիստերիան ուրիշ նպատակ էլ ուներ՝ լիովին մաքրել հայերից Շուշվա շրջանն ու Կրկժան քաղամասը: Շուշվա շրջանի հայազեր ծումը կնշանակեր ԼՂԽՄ-ի էրեթիկական երկատում և լրիվ մեկուսացում Հայաստանից: Իսկ Կրկժանի հայաջնջումից հետո մարզկենտրոնը կգտնվեր ստրատեգիական բարձունքներ գրաված ադրբեջանցիների նշանակետում: Նամանավանդ՝ Կրկժանն ուղիղ նանապարհով կապված է Շուշվա հետ, և եթե շիճեն 45 հայկական ընտանիքները, ապա ադրբեջանցիները գործողությունների ազատություն կստանային:

Հավանաբար, Ադրբեջանի մտադրությունը աշակցվում էր մոսկովյան որոշ բարձրաստիճան շինվորիկների կողմից: Այսպես ինչու՞ վ բացատրել ԼՂԽՄ-ում ՏԱՍՍ-ի քրթակցի տված ինֆորմացիայի հրեշավոր նենգափոխումը. «ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը, ապա նաև կենտրոնական քերթերը ամբողջ աշխարհով մեկ տարածեցին, որ Ստեփանակերտի մերձակայքում «ժողովից կրակել և սպանել են երկու ադրբեջանցու»: Անգեն աչքով անգամ կարելի էր այդ տողերի ետևում ծանոթ կոտորներ տեսնել: Այդ ամենը եղել է, եղել է... Հիշում եմ՝ 1988-ի փետրվարին ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Կատուսևի նման հայտարարությունը սկիզբ էր դրել հայերի ջարդին: Պատմությունը կրկրնվում է:

Զինվորական իշխանությունները իրենց հերթին հանցավոր անտարբերություն են ցուցաբերում և փորձ անգամ չեն տեսնում զինարավելու ադրբեջանցիներին: Փաստաբեև Ադրբեջանը պատերազմ է հայտարարել Արցախին, և մենք մնացել ենք մեն-մենակ:

Այսօր, երբ ԼՂԽՄ է ժամանել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը, հարաբերական հանդարտություն է տիրում: Անկեղծ լինենք՝ դառաբաղցիներն առանձնապես մեծ հույսեր չեն կապում այդ հանձնաժողովի հետ, քեև պատրաստվում են հազարումեկերորդ անգամ բացատրել իրենց ցավը: Ու հիմա, ավելի ֆան երթեք, մենք պիտի միասնական լինենք: Քող սա անհիմն կոչի տպավորություն չբողնի: Պարծյալ մասնատվածության փորձեր են արվում, դարձյալ վայ-հայրենասերները դավեր են նյութում մեր որոշ ճանաչված մարդկանց դեմ: Ուշ է՞ր՝ եկեք... Գոնե հիմա: